№ 3 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 8 1900 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 8 № 3

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 *րուբլի. կէս տարվան* 6 *րուբ. Առանձին համարները* 5 *կոպէկով.*

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». *Կամ* Tiflis, Rédaction «Mschak». *Տէլէֆօն* № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 *ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից)*

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 *կոպէկ. Տէլէֆօն* № 253.

Վաղը, կիրակի, ամսոյս 9-ին,

ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

մահվան քառասնօրեայ օրը, կը կատարվի Քամոյեանց եկեղեցում պատարագ եւ ապա հոգեհանգիստ, որի մասին հանգուցեալի մայրը, քոյրերը եւ եղբայրը յայտնում են ազգականներին եւ ծանօթներին։

Պատարագի սկիզբն է $10^1/_2$ *ժամին, իսկ հոգեհանգիստը կը սկսվի* 12-ին։

1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Կարիքներ եւ պահանջներ. Նորից երկրաշարժ.—*ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Մամուլ. Երկրաշարժից վնասվածների օգտին. Հայոց թատրօն. Նամակ խմբագրութեան։ Ներքին լուրեր.—*ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Քաղաքական աշխարհը* 1899 *թուականին. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լուրեր.—*ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. *Համալի մասնաճիւղ.*

ԿԱՐԻՔՆԵՐ ԵՒ ՊԱՀԱՆՋՆԵՐ

—

Հերթական հարցերից մէկը, որ դրված է ներկայումս կովկասեան վարչութեան եւ նրա ազգաբնակութեան առաջ, զեմստվօի, կամ գաւառական ինքնավարութեան հարցն է։ Այդ հարցի մշակութիւնը բաւական առաջ է տարված, սակայն նա դեռ չէ ամփոփվել եւ ձեւակերպվել այնպէս լիակատար կերպով, որ կառավարութիւնը առանց դժուարութեան իրագործէր գաւառական ինքնավարութեան ծրագիրը մեր երկրի ամբողջ տարածութեան վրա։

Իսկ կեանքի կարիքները եւ պահանջները օրից օր աւելի եւ աւելի զգալի են դարձնում տեղական կազմակերպութեան բացակայութիւնը։ Մեր գաւառը տանջվում է մի շարք անյարմարութիւններից եւ տեղական խոչընդոտներից, որոնք սակայն կարող էին հեռացվել, եթէ լինէր այնպիսի կազմակերպութիւն, որ օգտվէր տեղական ոյժերից եւ նիւթական միջոցներից մաքառելու արդելատիպ հանգամանքների դէմ։ Մեզ ամենքիս յայտնի է, թէ որ աստիճանի անբաւարար վիճակի մէջ է մեր գաւառում բժշկական օգնութեան գործը, ընդարձակ տարածութիւններով տանեակ եւ հարիւրաւոր գիւղեր տարիներ շարունակ չեն տեսնում բժշկի եւ հիւանդանոցի երես եւ ազգաբնակութիւնը ստիպված դիմում է տեղական հաքիմներին եւ հմայողներին։ Իսկ մեր գաւառական հաղորդակցութեան ճանապարհները։ Մի՞թէ կարելի է երեւակայել աւելի նահապետական բան, քան մեր ճանապարհները։ Շատ տեղ գիւղից գիւղ կամ գիւղից քաղաք գնալը համարվում է մի հերոսութիւն, որին ընդունակ են ոչ բոլորը գիւղացիները։ Մենք այլ եւս չենք խօսում այն բանի մասին, որ գաւառական պօստը բոլորովին գոյութիւն չունի մեր գիւղաշրջանում եւ գիւղացիները նամակներ, կամ ուրիշ ծրարներ ստանում են քաղաքներից եւ այդ նպատակով նրանք ստիպված են յատուկ մարդ ուղարկել քաղաք կամ օգտվել դէպքերից, երբ մէկը պատահաբար քաղաք է գնում ուրիշ գործերով։ Նոյն անօգնական դրութիւնն է ակներում, երբ գաւառում երեւում է որ եւ է ձեռնարկութիւն, օրինակ անասունների վրա յայտնվում է ցաւ, տեղի ունեն անբերրիութիւն կամ հեղեղ։ Ազգաբնակութիւնը լինելով որոշ կերպով կազմակերպված, կարող է այդ բոլոր ձախորդութիւնների առաջն առնել. բայց անհրաժեշտ է, որ այդ կազմակերպութեան կաղապարը մշակված լինի։

Նոյն տեսակ են եւ այն ձեռնարկութիւնները, որոնք ունեն կրթական եւ կուլտուրական զարգացման նպատակ։ Դպրոցների բազմացնելը, գիւղատնտեսական օգտակար գործիքների տարածելը, արհեստների սովորեցնելը—շատ տեղ Ռուսաստանում աջողվել է միայն զեմստվօի, միայն տեղական ինքնավարական կազմակերպութեան միջոցով։

Անդրկովկասի տեղական պայմանները փոքր ինչ տարբեր են Ռուսաստանի ներքին նահանգների պայմաններից եւ այդ հանգամանքը պահանջում է, որ զեմստվօի կանոնադրութիւնը յարմարեցված լինի մեր տեղական առանձնայատկութիւններին։ Սակայն դա միայն տեխնիկական դժուարութեան մի հարց է, որ կարելի է յաղթել հմուտ վարչական անձերի եւ մասնագէտների գործակցութեամբ, թողնելով, որ անխուսափելի թերութիւնները վերացվեն ժամանակի եւ փորձի թելադրութեան համաձայն։

ՆՈՐԻՑ ԵՐԿՐԱՇԱՐԺ

—

Մեր թղթակիցը հեռագրում է մեզ Ախալքալաքից.

«Յունվարի եօթին, առաւօտեան ժամի տասին, Բարալէթի չրջանում տեղի ունեցաւ բաւական ուժեղ երկրաշարժ։ Քանդված են մի քանի տներ, զոհեր չը կան։ Ազգաբնակութիւնը ծայրայեղ սարսափի մէջ է։

«Քանդված գիւղերի չրջականերում երեւում են խորշոմներ, որոնք սակայն կարող էին հեռացվել, եթէ լինէր այնպիսի կազմակերպութիւն, որ օգտվէր տեղական ոյժերից եւ նիւթական միջոցներից մաքառելու արդելատիպ հանգամանքների դէմ։ Մեզ ամենքիս յայտնի է, թէ որ աստիճանի անբաւարար վիճակի մէջ է մեր գաւառում բժշկական օգնութեան գործը, ընդարձակ տարածութիւններով տանեակ եւ հարիւրաւոր գիւղեր տարիներ շարունակ չեն տեսնում բժշկի եւ հիւանդանոցի երես եւ ազգաբնակութիւնը ստիպված դիմում է տեղական հաքիմներին եւ հմայողներին։ Իսկ մեր գաւառական հաղորդակցութեան ճանապարհները։ Մի՞թէ կարելի է երեւակայել աւելի նահապետական բան, քան մեր ճանապարհները։ Շատ տեղ գիւղից գիւղ կամ գիւղից քաղաք գնալը համարվում է մի հերոսութիւն, որին ընդունակ են ոչ բոլորը գիւղացիները։ Մենք այլ եւս չենք խօսում այն բանի մասին, որ գաւառական պօստը բոլորովին գոյութիւն չունի մեր գիւղաշրջանում եւ գիւղացիները նամակներ, կամ ուրիշ ծրարներ ստանում են քաղաքներից եւ այդ նպատակով նրանք ստիպված են յատուկ մարդ ուղարկել քաղաք կամ օգտվել դէպքերից, երբ մէկը պատահաբար քաղաք է գնում ուրիշ գործերով։ Նոյն անօգնական դրութիւնն է ակներում, երբ գաւառում երեւում է որ եւ է ձեռնարկութիւն, օրինակ անասունների վրա յայտնվում է ցաւ, տեղի ունեն անբերրիութիւն կամ հեղեղ։ Ազգաբնակութիւնը լինելով որոշ կերպով կազմակերպված, կարող է այդ բոլոր ձախորդութիւնների առաջն առնել. բայց անհրաժեշտ է, որ այդ կազմակերպութեան կաղապարը մշակված լինի։

Նոյն տեսակ են եւ այն ձեռնարկութիւնները, որոնք ունեն կրթական եւ կուլտուրական զարգացման նպատակ։ Դպրոցների բազմացնելը, գիւղատնտեսական օգտակար գործիքների տարածելը, արհեստների սովորեցնելը—շատ տեղ Ռուսաստանում աջողվել է միայն զեմստվօի, միայն տեղական ինքնավարական կազմակերպութեան միջոցով։

Անդրկովկասի տեղական պայմանները փոքր ինչ տարբեր են Ռուսաստանի ներքին նահանգների պայմաններից եւ այդ հանգամանքը պահանջում է, որ զեմստվօի կանոնադրութիւնը յարմարեցված լինի մեր տեղական առանձնայատկութիւններին։ Սակայն դա միայն տեխնիկական դժուարութեան մի հարց է, որ կարելի է յաղթել հմուտ վարչական անձերի եւ մասնագէտների գործակցութեամբ, թողնելով, որ անխուսափելի թերութիւնները վերացվեն ժամանակի եւ փորձի թելադրութեան համաձայն։

ՆՈՐԻՑ ԵՐԿՐԱՇԱՐԺ

—

Մեր թղթակիցը հեռագրում է մեզ Ախալքալաքից.

«Յունվարի եօթին, առաւօտեան ժամի տասին, Բարալէթի չրջանում տեղի ունեցաւ բաւական ուժեղ երկրաշարժ։ Քանդված են մի քանի տներ, զոհեր չը կան։ Ազգաբնակութիւնը ծայրայեղ սարսափի մէջ է։

«Քանդված գիւղերի չրջականերում երեւում են խորշոմներ, որոնք սակայն կարող էին հեռացվել, եթէ լինէր այնպիսի կազմակերպութիւն, որ օգտվէր տեղական ոյժերից եւ նիւթական միջոցներից մաքառելու արդելատիպ հանգամանքների դէմ։ Մեզ ամենքիս յայտնի է, թէ որ աստիճանի անբաւարար վիճակի մէջ է մեր գաւառում բժշկական օգնութեան գործը, ընդարձակ տարածութիւններով տանեակ եւ հարիւրաւոր գիւղեր տարիներ շարունակ չեն տեսնում բժշկի եւ հիւանդանոցի երես եւ ազգաբնակութիւնը ստիպված դիմում է տեղական հաքիմներին եւ հմայողներին։ Իսկ մեր գաւառական հաղորդակցութեան ճանապարհները։ Մի՞թէ կարելի է երեւակայել աւելի նահապետական բան, քան մեր ճանապարհները։ Շատ տեղ գիւղից գիւղ կամ գիւղից քաղաք գնալը համարվում է մի հերոսութիւն, որին ընդունակ են ոչ բոլորը գիւղացիները։ Մենք այլ եւս չենք խօսում այն բանի մասին, որ գաւառական պօստը բոլորովին գոյութիւն չունի մեր գիւղաշրջանում եւ գիւղացիները նամակներ, կամ ուրիշ ծրարներ ստանում են քաղաքներից եւ այդ նպատակով նրանք ստիպված են յատուկ մարդ ուղարկել քաղաք կամ օգտվել դէպքերից, երբ մէկը պատահաբար քաղաք է գնում ուրիշ գործերով։ Նոյն անօգնական դրութիւնն է ակներում,

ցին գայլերի երամակներ։ Կարզախ գիւղի բնակիչները վերցրել են 120 հոգի ամբողջ ձմեռը խնամելու համար, իսկ Գիւմուրգա գիւղի բնակիչները—60 հոգի։ Սկավեց հալոցքը, որ նպատաւում է գաւառում վնասված անների փրկելուն։

«Տեղական կոմիտէսը աղէտի տեղն ուղարկեց ութ մարդ, զոհերի թիւը եւ նիւթական վնասները ճշդելու համար։ Բժիշկների եռանդուն գործունէութիւնը հիւանդանոցներում արժանի է անկեղծ չնորհակալութեան։ Երկու գիւղերի քոյրեր եկան։»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

—

Կովկասի կառավարչապետ իշխան Գօլիցինի չրջաբերականը, որ տպագրվեց «Кавказъ» լրագրի այս տարվայ № 1-ի մէջ եւ որի թարգմանութիւնը մենք զետեղեցինք «Մշակի» № 2-ի մէջ, արժանի է խորին ուշադրութեան։ «Кавказъ» լրագիրը, մի առաջնորդող մէջ, որ նուիրված է այդ չրջաբերականին, ասում է.

Շրջաբերականը այնքան պերճախօս կերպով պատճառաբանում է մեր երկրի հարկատու ազգաբնակութեան վրա ընկած տուրքերի թեթեւացումը, որ նրա նշանակութիւնը կարօտ չէ բացատրութիւնների. բայց չէ կարելի չը նկատել, որ, ոչնչացնելով մի մասը այն տուրքերի, որոնք մինչեւ այժմ ստացվում էին հարկատու ազգաբնակութիւնից, չրջաբերականը, բացի դրանից, ոչնչացնում է այն բազմաթիւ զեղծումները, որոնք գործադրվում էին այդ հարկերը հաւաքելիս, ծանրանալով գլխաւորապէս գիւղական հասարակութիւնների ազգատ, ճնշված անդամների վրա։ Միայն նա, ով կարողութիւն է ունեցել աչքի մօտիկից տեսնել գիւղական հասարակութիւնների մէջ գոյութիւն ունեցող կարգերը, կը հասկանայ, թէ չրջաբերականը որքան կարեւոր հետեւանքներ կունենայ։

Լրագիրը իրաւացի կերպով նկատում է, որ իշխան-կառավարչապետի այդ կարգադրու-

Գանք էլի մեր նեժնի մարօժնի Շուրի մօտ։

Դուսը խօ տեսաք վունց է ման գալի, տանն ինչ է չինում, կու հարցնիք։

—Վունչիչ։

—Ինչով է ապրում։

—Մէ երկու չայի հօրմին թողած կայ ու էնդով վունցոր ըլում է եօլա ին գնում՝ ինքն էլ ու իր խիղճ մէրն էլ։ Մէ խօսկով մնուկը կենթան է պահում։

Շատ լաւ կնիկ է էս կնիկը. բարի, նամուսավոր, իր չուաքեմէն քաչվող, ամա հին գայիդի կնիկ է. գլուխը կապած ու վունց մօդնի հագնիլ գիդէ, վունց էլ մօդնի փիչ բռնիլ։

Հալբաթ էս է պատճառը, վոր մեր հիդ խանդխան բուլվարի վրա անգկնկնալիս, Շուրէն մէ գլուխ դիմի առաչ է վազում։

Շատ է ասում էս խիղճ մէրը իր ախչիկ Շուրէն՝ վուրթի եա կար արա, եա ձիւ արա, եա խաքին փէչակ սորվի քիզ համա, եա թէ չէ չուսա մարթու գնա, թէ չէ էսէնց տանը կու քացխա ու կու մնանք ջրատար։

Ամա ասողին լսող պիտի ու Շուրէն զարթնի մօդնի հագնիլը ու մօդնի մանգալը ուրիշ վունչիչ չնուք չունէ։

Մարթ ուզիլը կի, տարի ձիզ ումբը, խիստ է ուզում սրտով. ամա վուրդի է էն մարթը, վոր Շուրիչկի համա մարթացու ըլի։

Վաճառականներիը հէսաբով մարթիք ին ու նրանք էնէնց ին փիքր անում, վոր Շուրիչկէն նրանցը ձեռք չի տա։

Մէկէլներէմէն էլ ով ուզում է նրան ուզի, նա լայիլ չէ անում, ու ումնօր ինքն է ուզում ուզի, նրանք էլ փուշտուր ախչիկ ին պատրաստում։

Բաս ինչ է Շուրիչկի վիրչը եա չարէն։

Կուլի դուք իմանաք։

Համալ

1 յունվարի
Թիֆլիս.

թեամբ գիւղական ազգաբնակութիւնը մի նոր մղում է սառնում իր քայքայված տնտեսութիւնը վերականգնելու համար։ Մնում է ցանկալ, որ գիւղական առնուտէրները եւ հաճիախները մեր երկրի բարձր իշխանութեան այդ կարգադրութիւնից հասկանային եւ այն, որ հարկատու ազգաբնակութիւնը զանազան ապօրէն հարկերով կեղեքելը մի մեծ յանցանք է օրէնքի առաջ եւ մեր կառավարութիւնը, որ վերոյիշեալ չրջաբերական՝ով ցոյց է տալիս, թէ որքան մեծ նչանակութիւն ունեն նրա համար հարկատու ժողովրդի բարեկեցութեան չահերը, չի թոյլ տայ, որ գիւղական ճարպիկները իրանց ապօրինութիւններով ծանրացնեն հարկատուների բեռը։ Օրինականութիւն, գիւղական ժողովրդի անձնական եւ կալուածական ապահովութիւն—ահա ինչին է ձգտում կառավարութիւնը, ինչպէս նկատում է «Кавказъ» լրագիրը. եւ այս սկզբունքը պէտք է լաւ հասկանան բոլոր այն մարդիկ, որոնք հասարակական դիրք ու պաչտօն ունեն գիւղերում, բայց յանդգնում են կարծել, թէ գիւղացի հարկատուի ճակատին գրված է մոռացված լինել եւ թէ նրանից, ինչպէս ասում է ժողովուրդը, կարելի է եօթը կաչի քերթել։

*

Անցած տարվայ մի համառօտ տեսութեան մէջ Վենեւիկի «Բազմավէպը» ուրախութիւն է յայտնում, որ լուսաւորչական եւ կաթոլիկ հայերը գոնէ Կ. Պոլսում «կաչաղանի դաւանանքի մոլեռանդութենէն ծագած մեծ ու զուգահաւասար ատելութիւնը վանել, փարատել եւ «եղբայր եմք մեք»-ի ոգին ճիւղաւորել ընդհանուր ազգութեան մէջ»։ Միխիթարեանների ամսագիրը աւելացնում է, թէ ռուսահայերը այդ բանի մէջ յետագիմում են։ Եւ կարծես այդ բանը՝ հաստատելու համար, Գիւտ քահանայ Ազնաւեան իր «Լումայ» ժողովածուի առաջին գրքում, որ նորերս լոյս տեսաւ, հանդէս է հանել հինաւուրց հրապարակախօս Մարկոս Ազարէկեանին։ Բանից դուրս է գալիս, որ «Կռունկի» խմբագիրը նոր միայն չտապել է Ազնաւեան քահանայի միջոցով յայտարարել «ի սիրուս աչխարհի», որ եթէ ինքը «Կռունկի» մէջ մի ժամանակ (այսինքն քառասուն տարի առաջ) օտարազգեան հայերին հայ չէ համարել, այդ ոչ թէ յանցանք է համարում, այլ իր դաւանութիւնը։ Իմացանք, որ այդպէս է, բայց ինչ է դուրս գալիս դրանից։ Պ. Ազարէգեանի դաւանութիւնը այժմ կարող է միայն հնապիտական նչանակութիւն ունենալ. բարեհոգի «Կռունկից» յետոյ սերունդներ են աճել, որոնք չատ էլ չեն հետաքրքրվում, թէ ինչ է դաւանել մի ժամանակ Հայաստանեայց սիրացուներից մէկը։ Հետաքրքրականը այն է, որ, տպելով պ. Ազարէկեանի մասին իր զեկուցումը, Գիւտ քահանան հիացմունքով է յիչում հին բարի ժամանակները, երբ անդառնալի կերպով վճռված էր, թէ ամեն մի լուսաւորչական, լինի նա նոյն-իսկ վաչխառու, արնախում, մանիչ, ունի հայ կոչվելու բոլոր իրաւունքները, մինչդեռ Բագրատունիները, Ալիչանները այդ իրաւունքը չունեն, քանի որ լուսաւորչական եկեղեցու քարերը չեն համբուրում։ Մենք, ի հարկէ, այդ երեւելի խմաստութիւնը քննելու համար չենք գրում այս տողերը, մի խմաստութիւն, որ վաղուց թաղված է կղերականութեան գերեզմաններում։ Մեր ընթերցողների համար, կարծում ենք, աւելի հետաքրքրական կը լինի մի համեմատութիւն։ Վաթսունական թուականներին մենք ունէինք ազգասէր մի մարդ, որի ներկայացուցիչն էր Մանդինեան քահանան։ Այդ մարդը այն էր, ինչ կարող էր լինել—եկեղեցի, խունկ, փարաջա, եւ ոչ մի ուրիշ իզէալ. եւ հաւատարիմ մնալով իր կոչման, Մանդինեան քահանան հալածելով հալածում էր Նազարեաններին, Նալբանդեաններին, որոնք հրաժարվելով հրաժարվում էին այն դաւանանքից, թէ «Արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չիք հայութիւն»։ Այժմ էլ Գիւտ քահանան է ամեն ճիգ թափում պահպանել ազգասէր գրականութիւնը իր «Լումայի» միջոցով. նա էլ հաստապինդ սիւն է այն աչխարհայացքների, դաւանութիւնների, որոնց ներկայացուցիչն էր իր նախատիպ Մանդինեանը։ Բայց նա մի եւ նոյն ժամանակ մեծ հրճուանքով տպագրում է Նազարեանի եւ Նալբանդեանի գրուածքները, չը սարսափելով այն հանգամանքից, որ գրանք Բեհեղեբուղներ էին «Մեղուի» անդրանիկ խմբագրի եւ նրա յաջորդի համար։ Ազգասիրութիւնն էլ fin de siècle-ի ազդեցութեան ենթարկվեց։ Ինչպէս չասել, թէ «ազգերնիս կը յառաջադիմէ կոր»։

*

Քանի որ խօսքերս հայերէն հանդէսների մասին է, յիչատակենք երկու «անպատեհութիւններ»։ Տիգրան Նազարեան տպեց իր մարտիրոսագրութիւնը, որի մէջ պատմեց թէ ինչեր է արել ինքը հայ ազգի համար։ Բանից դուրս է գալիս, որ նա այնքան էլ քիչ բան չէ արել. երախտամոռ ազգը չը գիտէ, որ Տիգրան Նազարեան նոյն-իսկ տպարան էլ է եղել բացած, այնպիսի տպարան, որի նմանը Պետերբուրգում պէտք է որոնել «տարազական» չափազանցութիւնների մի համեատ նմուշ։ Եւ այժմ այդ տպարանը—ահ, պահեցէք ձեր արտասուքները—Բագուում առեւտրական գործեր է կատարում։ Մենք ցաւում ենք Տիգրան Նազարեանի անյաջողութիւնների վրա. բայց մի եւ նոյն ժամանակ չենք կարող չը նկատել, որ այդ անյաջողութիւնների մի պատճառն էլ պէտք է որոնել այդ տեսակ տպարանական կամ այլ բէկլամամոլութեան մէջ։..

Միւս անպատեհութիւնը Պարիզի «Բանասէր» հանդէսի մէջ ենք գտնում։ Այդ հանդէսը իրան Թումանց պիտական է համարում եւ վերջին համարում տպագրել է Պարիզի մատենադարանի մէջ գտած մի ձեռագիր, որի հեղինակն է հայ կաթոլիկ քահանայ Աւգոստինոս Բաջինց։ Խմբագրութիւնը յայտարարում է թէ այդ չատ հետաքրքրական յիչատակարանը առաջին անգամն է լոյս տեսնում. մինչդեռ նա լոյս է տեսել Պետերբուրգում դեռ 1880-ական թուականներին եւ հրատարակողն է պրօֆէսօր Պատկանեան, որ հէնց նոյն Պարիզի մատենադարանից է վերցրել այդ ձեռագիրը։ Գիտնականութեամբ պարծեցողները պիտի չատ զգոյշ լինեն. նրանց չատ ծանօթ պիտի լինի ամբողջ գրականութիւնը, թէ չէ այսպիսի «անպատեհութիւններով» նրանք կարող են իրանց վարկը գցել։

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք երկրաչարժից վնասվածների օգտին հետեւեալ նուէրները.

Ա ս տ ր ա խ ա ն ի ց՝ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանից (հեռագրով փոխադրած) 2000 րուբլի։

Մ օ ս կ վ ա յ ի ց՝ 1) Բագրատ վարդապետ Վարդազարեանից (հեռագրով փոխադրած) 2900 ր. 2) Լեւոն Սարգսեանից 10 րուբլի։

Ե ր ե ւ ա ն ի ց, Ց. Տէր-Մարտիրոսեանից 182 րուբլի, որ նուիրել են՝ 1) Օր. Ե. Տէր-Սարգսեանի միջոցով. Ս. Աւետիսեան 10 ր., Ս. Մէլիք-Ազամալեան 5 ր., Ղ. Լազարեան 5 ր., օր. Ե. Տէր-Սարգսեանց 3 ր., Ա. Ջալալեանց 3 ր., Ոմն 1 ր.։ 2) Տ. Տէր-Յակոբեանի միջոցով. տ. Մ. Գէորգեանց եւ որդիներ 7 ր. 50 կ., Խ. Աւետիսեանց 5 ր., Տ. Տէր-Յակովբեան 5 ր. 10 կ., Ա. Աւետեան 5 ր., տ. Ս. Խուդաբաչեանց, պ. Գէորգեանց, Ա. Գաբրիէլեանց, Մի խումբ, Մ. Նալբանդեանց 3-ական րուբլի։ Ս. Աւետիսեանց 2 ր. 40 կ., Մ. Սմբատեանց, Մ. Գիւլիխանդանեանց 2-ական րուբլի։ Ա. Տիգրանեան, Ա. Բաղրամեան, N., Գ. Ղարիբեան, Յ. Եարալեան, Տ. Մուշեղեան մի-մի ր.։ 3) Տիկին Մէլիք-Օհանջանեանցի միջոցով. տ.տ. Ե. Եղիազարեան 2 ր., N. 2 ր., Ա. Տէր-Յակովբեան, Ա. Մէլիքեան, Ս. Մէլիք-Օհանջանեան, Փ. Վարդանեան, Ոմն, տ. Եղիազարեան, օր. Մ. Աճառեան, տ. Ս. Տէր-Մարտիրոսեան մի-մի րուբլի։ 4) Վ. Մէլիք-Օհանջանեանցի միջոցով. Վ. Մէլիք-Օհանջանեան, Հ. Յովհաննիսեան, Дмитрій Пименади, Х., Գ. Ազիզեան մի-մի րուբլի։ Ներսէսեան, Ս. Մնացականեան, Մի ոմն, Վ. Խալաթեան, Մ. Դաւթեան, Դէվոյեանց, Մի ոմն 50-ական կոպէկ։ Յ. Ազիզեան 30 կ., Մի ոմն 25 կ.։ 5) Ա. Յակովբեանի միջոցով. Ա. Յակովբեան, Ղ. Ազաթեան, Հ. Դէլեանեան, Ի. Տէր-Իսահակեան, Գ. Ազիզեան մի-մի րուբլի։ Ա. Մէլիքեան, Յ. Մուրեանի միջոցով. Ա. Մարջեան 3 ր., Գրիգորեան 2 ր., Դ. Խոջայեան, Գ. Մէլիքեան մի-մի րուբլի։ Ս. Գրիգորեան, Խ. Բունեաթեան 60-ական կոպ.։ Հ. Գասպարեան, Գ. Պօղոսեան 50-ական կոպ.։ 10) Ս. Բագլաչեանի եւ Գ. Աղազադեանի միջոցով. Պ. Քարհանեան 3 ր.. Մ. Ճարակեան 1 ր. 60 կ., Ս. Մարգարեան, Х., Х., Х., Գ. Աղազադեան, Յ. Տէր-Մարտիրոսեան, Բ. Տէր-Մարտիրոսեանց Յ. Թադէոսեան, Ս. Բագլաչեան, Մ. Գրիգորեան մի-մի րուբլի։ Մ. Խաչատրեան, Բ. Սարգսեան, Յ, Ազիզեան, Ա. Սարգարեան, Կ. Վարդանեան, Թ. Բաբայեան, Ոմն, Մաչաղի-Ուսուֆ-Աղա-Ալի-Օղլի, Վ. Դաւթեանց, տ. Ս. Բագլաչեան, Ոմն, Բաղրամեան, Յաբրութիւնեան, Խաչատրեան, Օ. Գալստեան, Կ. Բաղրամեան, Հ. Զանիբէգեան 50-ական կոպ.։ Յ. Գալստեան 1 ր., Ոմն 50 կ., Ս. Տիգրանեան 45 կ., Մ. Գիւլխանդանեան 40 կ., Ա. Սադոյեան 40 կ., Մ. Տէր-Պետրոսեան 30 կ., Մ. Բաբաեան 30 կ., Հ. Սարգսեան 25 կ., Վ. Սահինեան 20 կ., Ա. Մնացականեան 20 կ.։ (Հանված է ճանապարհածախս 55 կոպ.)։

Վ լ ա դ ի կ ա վ կ ա զ ի ց՝ Գ. Աստուածատրից 10 ր., եղ. Մ. եւ Զ. Փիլոսեանցներից 10 րուբլի։

Կ ա զ ա ն ի ց՝ Մ. Ղազարեանից 22 րուբ. նուիրատուներն են. Մ. Ներսիսեան 3 ր., Պ. Մանուկեան 3 ր. 50 կ., Մ. Ասլանեան 2 ր. 50 կ., Թ. Գիւլբայազեան 2 ր. 50 կ., Մ. Ղազարեան 3 ր. 50 կ, Տ. Վարսեան 1 ր., Սարգիս Քանանեան 1 ր., Մ. Մատոյեան 1 ր., Ս. Օլիեցեանց 50 կ., Ֆ. Կարապետեան 50 կոպէկ։ Մի հարսանիքում հաւաքված 3 ր. 27 կ. (Հանված է ճանապարհածախս 27 կոպէկ)։

Գ ե տ ա բ է կ գիւղից (Գանձակի գաւառ), Շամսեան քահ. Բորեանցից 44 ր. 25 կ., որ նուիրել են. Գետաբէկի գիւղական հասարակութիւնը 10 ր., Յ. Մանասեանց 1 ր., Լ. Մանասեանց 50 կ., Տ. Շ. 1 ր., Ա. Սահինեան 1 ր., Խ Գրիգորեան 50 կ., Նաւասարդ եւ Սերգի 1 ր., Վ. Շահրազեան 50 կ., Ա. Ալթունեան 1 ր., Բ. Տէր-Սիմէօնեան 20 կ., Յ. Մելքումեան 20 կ., Խ. Յակոբեան 35 կ., Ս. Ազիբէկեան 2 ր., Ա. Գրիգորեան 1 ր., Յ. Այվազեան 1 ր., Ն. Ալթունեան 1 ր., Ս. Եկանեան 1 ր., Ս. Վերդեան 1 ր., Ա. Այվազեան 1 ր., Շ. Դադեան 1 ր., Ա. Օհանէսեան 1 ր., Ա. Բուլղադարեան 20 կ., Ա. Բուլղադարեան 20 կ., Ի. Յակոբեան 2 ր., Գ. Բաղդասարեան 50 կ., Ի. Բուլղադարեան 50 կ., Մ. Արզումանեանց 1 ր., Պ. Գրիգորեան 1 ր., Հ. Օհանէսեան 1 ր., Գ. Արաբաչեան 1 ր., Մ. Յակոբեան 2 ր.. Յ. Սարգսեան 2 ր., Ս. Ամիրեան 50 կ., Մ. Անտոնեան 50 կ., Հ. Գրիգորեան 40 կ., Բ. Աատուրեան 50 կ., Գ. Օգարաչեան 50 կ., Խ. Ադամեան 20 կ., Մ. Խոջայեան 50 կ., Յ. Մուսայէլեան 50 կ., Ե. Խոջայեան 50 կ., Մէլիք-Շահնազարեան 50 կ., Մ. Մրրոյեան 25 կ., Ա. Եկանեան 50 կ., Զ. Ալասգեար օղլի 50 կ. (Հանված է ճանապարհածախս 25 կ.)։

Ընդամենը 5178 րուբլի 25 կոպէկ։

Մինչեւ այժմ ստացել ենք 10054 ր. 61½ կոպէկ եւ երկու ոսկի ռուպի, ուղարկել ենք 1800 րուբլի։ Երէկ յանձնեցինք Թիֆլիսի կոմիտեին 8200 րուբլի։ Մեզ մօտ մնում է 54 ր. 61½ կոպ. եւ երկու ոսկի ռուպի։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ

—

Վերջապէս, Թիֆլիսի հայ հասարակութեան տրտունջներին վերջ տրվեց։ Տեղական դերասանները կազմեցին մի ընկերութիւն, հրաւիրվով եւ ֆէյէկեան օրիորդներին, որոնք այս սեզօնին չեն գնացել Բագու։ Խմբի մէջ կան աչքի ընկնող ոյժեր եւ կարող են բաւարարութիւն տալ ոչ խստապահանջ հասարակութեան պահանջներին։ Ընկերութիւնն իր առաջին ներկայացումը տուեց դեկտեմբերի 30-ին. խաղացին պ. Ա. Սարդարեանի՝ Րաֆֆիի «Հարեմ» եւ «Դաւիթ բէկ» վէպերից նոր փոխադրած դրաման, որի անունն է «Զուբէիդա»։ Պիէսի բովանդակութեան մասին չենք խօսի, քանի որ դա յայտնի է, իսկ ինչ վերաբերում է դրամայի ներքին կազմակերպութեանը, խարակտէրների ստեղծագործութեանը՝ պէտք է ասած, թոյլ է, գործողութիւնը չատ դանդաղ է առաջ ընթանում։ Պիէսը չատ է ձգձգված աւելորդ խօսակցութիւններով։ Առաջին երկու գործողութիւնները լաւ են, պահպանված են նրանց մէջ ներքին կապ եւ կարելի էր դրանով էլ վերջացնել, աւելացնելով մի պատկեր։ Պիէսը ոչինչ չի կորցնի, եթէ դուրս ձգվի չորրորդ գործողութիւնը եւ վերջին երկու պատկերները կրճատած միացնվէին երրորդ գործողութեանը։ Պիէսը այն ժամանակ է թողնում ազատած տպաւորութիւնը, երբ նա կարճ է եւ գործողութիւնն արագ է ընթանում. հեղինակի աւելորդաբանութիւնները միչտ վնասում են տպաւորութեանը։

Մանրամասնօրէն այս պիէսի մասին էլի աւելի կոնկրետ խօսելու։

Ինչ վերաբերում է խաղին՝ պէտք է ասած, որ բաւարար էր, միայն աչքի էր ընկնում բէժիսորի բացակայութիւնը. երեւի այդ նրանից է, որ մեր յարգելի դերակատարները ամեն մէկը առանձին վերցրած՝ ինքն իրան մի արտիստ է երեւակայում եւ չէ ուզում լսել մի ուրիշին։ Այդ երեւոյթը կարող է գործին վնասել։

Խմբի երկրորդ ներկայացումը կայանալու է կիրակի, յունվարի 9-ին։ Կը խաղան ֆրանսերէնից փոխադրած «Ջաւակ» պիէսը։ Ընկերութիւնը կը տայ տասն ներկայացում եւ ոչ մի բէնեֆիս չէ լինելու. ընկերութիւնը որոշել է ոչ ոքի առանձին չուզարկել, որը միչտ արտունչ էր պատճառում հասարակութեան։ Մնում է քաջալերել խումբը, յաճախելով թատրօն։

Thaleia

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցին ամսիս 4-ին, կիրակոյան ժամի 9-ին, ճանապարհվեց Պետերբուրգ Պետրօվսկի վրայով։

—

Երկրաչարժի ազէտից վնասված ժողովրդի դրութիւնը մեր հասարակութեան մէջ մեծ արձագանգ գտաւ։ Մեր խմբագրութիւնը չարունակ նուէրներ է ստանում. նուիրատուութիւնների ցուցակները այնքան չատացել են մեզ մօտ, որ մենք անկարող ենք միանգամից տպագրել բոլորը միաժամանակ. թէ տեղի պատկառութիւնը եւ թէ այն հանգամանքը, որ «Մշակը» ոտներին չէր հրատարակվում, հարկադրում են մեզ մաս-մաս տպագրել այդ ցուցակները։ Կաչխատենք մինչեւ այժմ ստացվածները որքան կարելի է չուտ տպագրել, որպէս զի այսուհետեւ ստացվող նուէրները իսկոյն տպագրվեն «Մշակի» մէջ։

—

Նկարիչ Ֆէյթվաճեանի նկարների մասին, որոնք հանդէս են դրված Փառքի Տաճարում, կարող ենք այժմ տալ աւելի մանրամասն տեղեկութիւններ։ Նկարչին չատ աչքողվում են այնպիսի նկարներ, որոնց մէջ պէտք է ցոյց տալ մանրազնին ուսումնասիրութիւն եւ մօտ դայիկայի աչխատութիւն։ «Սուլթան Մահմէդ I-ի դամբարանը» եւ «Վենեցիայի Ս. Մարկոս» եկեղեցու մասերը տալիս են մօզայիկային նուրբ նկարչութեան հաղուագիւտ ապացոյցներ։ Աւելի քիչ է աչքողվում նկարչին պատկերացնել օգը եւ հեռաւորութիւնը։ Թիւրքական պօստը Փոքր-Ասիայում նկարի մէջ, օրինակ, չատ գեղեցիկ են պօստ տանող ձիերը, նրանց առաջնորդող պօստատարները, աջողվ են զարիվարի ճանապարհը եւ նրա չրջակայքը, բայց հեռաւոր հորիզոնը չէ թողնում ցանկալի տպաւորութիւնը։ Նկարչի մի ուրիչ լաւ յատկութիւնն է ներկերի գեղեցիկ դասաւորութիւնը եւ ընտրութիւնը։ Ալէքսանդրապոլցի հայուհու զգեստը իր բազմերանգ գոյներով, բարձերը իրանց փայլուն բնորոշ գոյներով արտայայտված են աչքող կերպով։ Բնական եւ կենդանի տպաւորութիւն է թողնում աղօթքի գիրք կարդացող հայ քահանան. նրա գլուխը, հանգիստ եւ կենարօնացած հայեացքը գրաւիչ են, եւ ամբողջ գեղեցիկ պատկերին փոքր ինչ թուլութեան կնիք են դնում միայն քահանայի ձեռքերը։ Ներկայ նկարահանդէսը ցոյց է տալիս, որ Ֆէյթվաճեան կարող է արդիւնաբերել լուրջ ուսումնասիրութիւն պահանջող նկարներ, որոնք առհասարակ չատ չեն հրապարակում։ Նըկարիչները չատ անգամ աչխատում են արագ վերջացնել իրանց գործը եւ նրանց հրապարակ հանել եւ խորչում են մանրակրկիտ աչխատութիւնից։ Հասարակութիւնը սկսել է յաճախել նկարահանդէսը եւ մի քանի պատկեր արդէն վաճառված են։

—

«Մշակի» անցեալ համարում սպրդել է մի խոչոր սխալ. տպված է, թէ մենք Գ ա ն ձ ա կ ի ց, Բագրատ վարդապետ Թաւաքալեանից ստացանք հեռագիր, որ նա փոխադրել է մեզ 1800 րուբլի երկրաչարժից վնասվածների օգտին. մինչդեռ այդ հեռագիրը մենք ստացել ենք Մ օ ս կ վ ա յ ի ց Բագրատ վարդապետ Վարդազարեանից։ Վարդազարեան վարդապետը մեզ փոխադրել է հեռագրով առաջին անգամ 1800 րուբլի, իսկ երկրորդ անգամ 1100 րուբլի, ինչպէս այդ երեւում է «Մշակի» այսօրվայ համարում տպված նուիրատուութիւնների ցուցակից։

—

Յունվարի 16-ին, կիրակի օր, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում կը կայանայ Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան օգտին պարահանդէս։ Երեկոյթի կարգադրիչները պատուիրել են ճոխ կիօսկներ, եւ ձեռք են բերել «էլէկտրական գուչակող», որ նորութիւն կը լինի հիւրերի համար։

—

Ստացանք Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութեան լոյս ընծայած Է լ ի զ ա Օ ժ ե կ օ ի «Ժողոյն հովուերգութիւն» վէպը, որ թարգմանել է ռուսերէնից Ա. Ահարոնեան։ Գրքոյկը բաղկացած է փոքրադիր 152 երեսից եւ արժէ 40 կոպէկ։

—

Ստացանք երկու պատի օրացոյցներ, որոնցից մէկը կազմել է Գիւտ քահանայ Ա-զանեանց, իսկ մեսը Մակար Ջմչկեան։ Վերջինս հրատարակել է եւ մի «Հայոց օրացոյց» ռուսերէն լեզուով, «Армянскій календарь» անունով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ 1899 ԹԻՒԱԿԱՆԻՆ

(Շարունակութիւն)

—

Խոշոր երեւոյթների չարքումն է նաեւ Դրէյֆուսի դատի վերջնական լուծումը, որ տեղի ունեցաւ անցեալ թուականին Ֆրանսիայում, եւ որ, գէթ մասամբ, բաւարարութիւն տուեց այդ դատով հետաքրքրված ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան արդարասիրական զգացմունքներին։

Բացի միջազգային սովորական փոփոխութիւններից, Ֆրանսիայում փոխուեց եւ հանրապետութեան նախագահը. վախճանված Ֆելիքս Ֆօրի տեղ ընտրուեց նոր նախագահ՝ Էմիլ Լուբէ։

Սակայն անմիջապէս երեւոյթները աւելի չատ էին անցեալ 1899 թուականին, քան միջազգայինները։

Գերմանիան չարունակում էր իր ցամաքային սպառազինութիւնները, պատրաստւում էր չարունակել եւ նոյն-իսկ ահագին չափերի հասցնել իր ծովային ոյժը։ Պրուսական կառավարութիւնը անարգար հալածանք սկսեց հիւսիսային Շլեզվիգի պրուսահպատակ դանիացիների դէմ, որոնց միակ մեղաւորութիւնը այն էր միայն, որ կամենում էին դանիացի մնալ։

Աւստրիայի գրութիւնը ուղղակի յուսահատական էր։ Այդ պետութիւնը կորցրել է արդէն, չնորհիւ նրան կազմող տարրերի փոխադարձ առելութեան, իր քաղաքական հետաքրքրութիւնը եւ արագ քայլերով դիմում է դէպի անկումն, եթէ չը կամենայ վերանորոգվել այլ սկզբունքով, եւ վերջ տալ անպէտ տուղ կռիւներին, որոնք կազմում էին նրա պետական սխուր կեանքի էութիւնը։

Ոչինչ միջազգային բան չէ կարելի ասել եւ Իտալիայի մասին։ Ժողովրդի ահագին բազմութիւնը, մանաւանդ Կալաբրիայում եւ Սիցիլիայում, նեղվում էր ինչպէս եւ նախորդ տարիներում ծանր հարկերի տակ, նեղվում էր քաղցից, աւազակային գաղտնի ընկերութիւններից, որոնց մասնակցում են նոյն-իսկ պատգամաւորներ, իսկ իտալական կառավարութիւնը, միեւնոյն նախագահ Պելլուի ղեկավարութեամբ, զբաղված էր քաղաքական կօմբինացիաներով եւ բաժանվող Չինաստանից մասը ստանալու ջանքերով։

Ամերիկացիներից յաղթված եւ երրորդական պետութեան վերածված Սպանիան ոչ մի կերպով չէ կարողանում խաղաղվել եւ առաջադիմութեան ընական ճանապարհը բռնել։ Կղերական մենիսարութիւն, յայտնի ապստամբութիւններ կառավարութեան դէմ, թագնված եւ խոլ դժգոհութիւն կառավարութիւնից, պետական գանձարանի սնանկութիւն, դասեր սպանօ-ամերիկական պատերազմի մեղաւորներին գտնելու համար, վճռուում մի ժամանակ բազմաթիւ գաղթականութիւնների փշրանքների—ահա այս էր Սպանիայի դրութիւնը 1899 թուին։

Բալկանեան մանր պետութիւնների կեանքը նոյնպէս մի առանձին միջազգային բան չէր ներկայացնում։ Սերբիայում տեղի ունեցաւ Կնեաժեվիչի յայտնի դասը, որի պատճառով դադարեցրվեցան արմատական կուսակցութեան չատ ներկայացուցիչներ, որոնք, իբր, դաւադրութիւն էին կազմել թագաւորահայր Միլանի դէմ, որը մի չար ոգի է դարձել Սերբիայի համար։

Թուրքիան, Պարսկաստանը եւ այլ նրանց բաղդակից երկրները չարունակում էին չնչել նոյնչափ ծանր, նոյնպէս դժուար, որպէս չընչում են երկար տարիներից ի վեր։ Այս միայն կարելի է ասել նրանց մասին, թէ 1899 թուականին նրանք գոռ եւս չէին մեռել...

Սակայն ամենից աւելի սխուր երեւոյթը Անգլօ-Տրանսվաալեան պատերազմն էր, որ իբրեւ մի անհաճոյ ժառանգութիւն անցաւ թուականից մնաց նորածին տարին։

Եւրոպայի ամենակուլտուրական ազգը, աշխարհի ամենամեծ կայսրութիւնը, թոյլ տուեց իրան պատերազմ սկսել ուղղակի արդարութեան դէմ, ի դէմս Հարաւային Աֆրիկայի փոքրիկ հանրապետութիւնների, չլացած այն հանգամանքներով, որոնք գոնվում են այդ հանրապետութիւնների հողում։

Ցաւանք, որ 1900 թուականը ակնյայտնի ցոյց կը տայ, թէ երբեմն եւ հալածված արդարութիւնը պիտի վրդովվել եւ խստօրէն պատժել իրան ոտնակոխ անողներին։

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

—

Պարիզ, յունվարի 6-ին

Հանրապետութեան թշնամիների դէմ սկսված կռճռոտ ու տաղտկալի պրօցէսը վերջացաւ։ Երեք կուսակցութիւնների տերտահոչակ ներկայացուցիչները, Դերուլէդ, Բիւֆֆէ եւ Գերէն՝ առաջինը նացիօնալիստ, երկրորդը արքայական, երրորդը անտիսեմիտ—բոլոր երեքն էլ ըստ արժանւոյն պատժվեցին. առաջին երկուսը դատապարտվեցին 10 տարով աքսորի, իսկ վերջինը նոյնքան ժամանակ բերդարգելութեան... Հանրապետութիւնն էլ չէ որ իրաւունք ունի պաշտպանվելու, ինչպէս եւ ամէն մի բէժիմ, երը նրան ոչնչացնել են ձգտում։ Բայց հանրապետութիւնը աւելի իրաւունք ունի, քան որ եւ է ուրիշ բէժիմ. որքան սուղ է նստել նա այս դիւցազնական ժողովրդին... Ֆրանսիան կարող էր արդէօք հանդուրժել, որ մի բուռն արկածախնդիրներ փորձէին անգամ ձեռք տալ այն նուիրական հաստատութիւններին, որոնց համար նա 1789-ից ի վեր արեան հեղեղներ է հասեցրել։ Անհներ առաջ Դէրուլէդ անունով տխուր հերոսը փորձեց պետական մի հարուածով ոչնչացնել այժմեան հանրապետական կարգերը եւ ստեղծել նոր, Դէրուլէդեան մի հանրապետութիւն, նոր սկզբունքներով։ Փորձը, ինչ ասել կուզէ, վիժեց։ Բայց այդ անակնկալը սթափեցրեց կառավարութիւնը, որը մինչեւ այն՝ մասների արանքով էր նայում նացիօնալիստների եւ ուրիշների չահատակութիւնների վրայ։ Զարկեցին ահա կռնակը։ Վալդէկ-Րուսսօն—ներկայ մինիստրութեան տաղանդաւոր գլուխը—ծաւալեց մի տենդային գործունէութիւն։ Ամէն տեղ միաժամանակ սկսվեցին խուզարկութիւններ։ Պարզվեց ընդարձակ մի դաւադրութեան գոյութիւնը, որին մասնակից էին նացիօնալիստներ, արքայականներ եւ անտիսեմիտներ։ Ցայտնի եղաւ նոյնպէս, որ այդ դաւադրութիւնը համակրողներ եւ նոյն իսկ աջակիցներ ունի նաեւ զօրքի առաջնորդների մէջ։

Այսօր ահա այդ երեւելի դաւադիրները, գէթ նրանցից գլխաւորները՝ արտաքսվում են երկրի սահմաններից, եւ Ֆրանսիան թերեւս կը խաղաղվի վերջապէս մեծ յուցահանդէսի նախընթաց օրը, եթէ ուրիշ անակնկալներ վրա չը հասնեն նորից։

Դատի ընթացքում մեր հերոսները իրանց ցինիզմով զարմացրին հասարակութիւնը եւ ապացուցին, որ արժանաւոր ծնունդ են այն հոսանքների, որոնք ներկայացուցիչ էին նրանք։ Դերուլէդ անխնայ չանթում էր դատաւորներին, իր փանփարոնութեամբ, առիւծի մռնչիւնով, հոգեհիւանդի զայրագին թափերով ծիծաղ էր միայն յարուցանում հասարակութեան մէջ, այն ինչ համախոհների բանակը ցնծութեամբ ծափահարում էր նրան։ Միլլուա, Կոպպէ եւ այլն իրանց աղատ դրիչներով դիւցազնացնում էին ժողովրդական աննման արիբունին. Դէրուլէդը՝ անմահ հայրենասէր, Դէրուլէդը՝ ամենամեծ ֆրանսիացին...

Միլլուա, Ժիւդէ, Դրիւմօն, Ռոչֆօր, Գերէն եւ այլն—անտիսեմիտներ, միապետականներ եւ իբր հայրենասէրներ—ժամանակակից Ֆրանսիայի այդ թափթփուկը կազմում էր քիչ առաջ հակադրէյֆուսական ամբողջ բանակը։ Եւ արդարութիւնը խեղդելու համար ոչ մի անբարոյական միջոց բաց չը թողին ձեռքից։ Եւ հասարակութեան այդ նողկալի տականքն է, որ յանդգնում է դլուխ բարձրացնել այժմեան հանրապետութեան դէմ։

Եւ—ó ծաղր—այդ բենեգաններն են ճչամբիտ ֆրանսիացիները, այն-ինչ Զօլա, Պիկար, Կլեմանսօ, Պրէսանսէ, Ժօրէս եւ այլն հայրենիքի դաւաճաններ են, «վիջազդայնականներ»։ Պէտք է ջնջել դրանց բոլորին, կործանել այժմեան հանրապետութիւնը եւ ապագայում կոչել ճչմարիտ հայրենասէրներին... Մերսիէին, Ռոժէին, Դերուլէդին եւ դրանց նմաններին—ահա բենեգաների իդէալը։ Նրանց փափաքն է ուենալ մի «ուժեղ» հայրենիք, թէկուզ եւ մրտրակով ղեկավարվելիս լինի նա, թէկուզ եւ վտարված լինի այնտեղից ամէն արդարութիւն։ Պաշտեցէք Մերսիէին, Հանրիին եւ ընկերներին, թէպէտ եւ այդ սեւ դէմքերը դահճի գեր են կատարել, թէպէտ եւ նրանք սիստեմաբար ու գիտակցաբար բռնաբարել են արդարութիւնը, արատաւորել են մեծ հայրենիքի պատիւը կեղծ զօրամիութիւններ հնարելով, սուտ ու փուտ վկայութիւններ տալով։

Մօտ եօթը չաբաթ տեւեց Դէրուլէդի եւ իր մեղսակիցների դատաքարութիւնը եւ վերջապէս կատարեալ խաղաղութեան մէջ։ Անարժան համարը նախատեսելով դատավճիռը՝ վաղուց արդէն թմրուկ էր զարնում, ձգտելով խռովութիւններ առաջացնել։ Նացիօնալիստները աչխատում էին որքան կարելի է ողբերգական գոյն տալ դատավարութեանը, երգում էին իրանց Դերուլէդի «նահատակութիւնը» եւ ամէն կերպ ճգնում էին գրգռել ամբոխը։ Ապարդիւն։ Պարիզը այս անգամ խուլ մնաց, հանդարտ, անխռով։ Միայն փողոցային չրջմոլիկների մի խումբ, որ սպասում էր դատավճռի արձակման, երեկոյեան դէմ անցաւ փողոցներից հարայ-հրոցներով, «կեցցէ Դերուլէդ» պոռալով։ Պարիզը անտարբեր էր—եւ դա ամենամեծ պատիժը եղաւ հանրապետութեան թշնամիների համար։

Մ. Ց.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Times» եւ «Standard» պահպանողական լրագիրները, ինչպէս հետագրում են «Новости»-ին Լօնդօնից, դեկտեմբերի 30-ին, պահանջում են, որ Սօլիսբիւրիի մինիստրութիւնը հրաժարական տայ։ «Morning Post»-ը ծաղրում է այդ օրգաններին, որոնք պահպանողական մինիստրութեան մշտական պաշպանները լինելով, այժմ իրանց զէնքը դարձրել են նրա դէմ։ Բալֆուրը, վշտացած մամուլի միահամուռ յարձակումներից, գնում է արտասահման։ Ունիօնիստներն անցնում են Րօզբերրիի բանակը։

—Բօլդարական լրագիրները տեղեկութիւն են ստացել Մակեդօնիայից, թէ դեկտեմբերի 24-ին Դեբրում նորից տեղի են ունեցել խոշոր անկարգութիւններ, որոնց ժամանակ սպանվել է գնդապետ Ա.ցի-Բէկը։ Սկօպլից Դէբր են ուղարկված հետեւակ զօրքի երկու վաշտ եւ հեծեալների մի էսկադրօն։

—Կահիրէի եգիպտական հնութիւնների մասէումի կառավարիչը նորերումս խէդիվի հօրեղբօր որդու այդտեղ գտել է մի հիանալի գրանիտեայ արձան, ծածկված նշանագիրներով։ Արձանը կանգնեցրած է ի պատիւ Եգիպտոսի աստիճանին փարաւօններից մէկի։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

—

Յունվարի 4-ին

Պէկին, «Рѣчь. գործ.»։ Իբրեւ նչանաւոր ապացոյց այն դերի, որ եապօնիան մտադիր է խաղալ Չինաստանի քաղաքականութեան մէջ, կարող է ծառայել այն հանգամանքը, որ եապօնական կառավարութիւնն առաջարկել է հիմնել Պեկինում զինւորական ակադեմիա, ուր չինացի ուսանողներ ուսման մէջ զեկավարվելին եապօնացի օֆիցերներից։ Չինական կառավարութիւնը դեռ եւս վերջնական պատասխան չէ տուել, բայց ենթադրում են, թէ նա կընդունի առաջարկութիւնը։

Վիեննա։ «Neue Freie Presse» լրագիրը հաղորդում է, թէ Վիտտէկի մինիստրութիւնը հրաժարական է տալիս։ Կէրբէրի նոր մինիստրութիւնը կը նչանակվի ուրբաթ օրը։ Ունգարական դելեգացիան ընդունեց զինւորական բիւդժէտը եւ դրա հետ միասին օֆիցէրների ռոճիկների աւելացումն։

ԿԱՊՇՏԱԴՏ, «Рѣчь. գործ.»։ Հիմք կայ լուծին հաւատալու Պիտերմարիցբուրգից հաղորդած տեղեկութեանը անգլիական զօրքի չարժման մասին Կօլենզոից դէպի Լէդի-Սմիթ։ Կարճ ժամանակից յետոյ կարելի է նչանաւոր տեղեկութիւնների սպասել։ Կապչտադտում ստացված հեռագրերից երեւում է, որ Լէդի-Սմիթում փորհարինքը վարակիչ բնաւորութիւն է ստանում։

ՊՐԵՏՕՐԻԱ, «Рѣчь. գործ.»։ Պաշտօնապէս հաղորդում են, թէ Մէֆկինգի վրա երէկ գործած յարձակման հետեւանքը եղել է խորատակումն այն ամրութիւնների, որոնց վրա արձակվել են բօէրները։ Բօէրների կողմից մի մարդ թեթեւ վէրք է ստացել։

ՐԵՆՍԲՈՒՐԳ, «Рѣчь. գործ.»։ Գնդապետ Պօրտերը անդադար ամրակոծում է Թչնամուն, որ ամուր վիրք է գրաւել Կօլենբերգի եւ Սլինդերֆօնտեինի միջեւ։

ՊՐԵՏՕՐԻԱ, «Рѣчь. գործ.»։ Լէդի-Սմիթի մօտ գտնվող բօէրների գլխաւոր բանակից ստացված է երկու հեռագիր, որոնցից մէկը՝ ուղարկված դեկտեմբերի 31-ին, հաղորդում է, թէ Լէդի-Սմիթի մօտ եւ Տուգելայի երկրամասում լուծիւն է տիրում։ Երկրորդ հեռագիրը, ուղարկված յունվարի 1-ին՝ հաղորդում է, թէ անգլիացիների գործած յարձակումն Պլատրանդ գլրի վրա մեծ վնասներ հասցրեց հէնց իրանց անգլիացիներին։ Լէդի-Սմիթում փորհարինքը վարակիչ բնաւորութիւն է ստացել։ Անգլիական զօրքերը, ըստ երեւոյթին, վատ են եւ այդ հանգամանքով է բացատրվում Բուլլերի զօրքերի մէջ նկատվող աչխոյժ գործունէութիւնը։ Բուլլերի զօրքերը, երեք մեծ բանակների բաժանված, զետեղված են Տուգելայի հարաւային կողմում։

ԲԵՐԼԻՆ. «Վօլֆի գործ.»։ Լաւերին նայելով՝ նաւթօրմի նախագիծն այսօր առաջարկված է դաշնակցական խորհրդին։

6 յունվարի։

ԼՕՆԴՕՆ, «Рѣчь. գործ.»։ Պաշտօնապէս հաղորդվում է, թէ յունվարի 3-ին, Րէյնբուրգի մօտ, բլրի տակ տեղի ունեցած կուի ժամանակ սպանված են եօթ անգլիացի, վիրաւորված են մի կապիտան եւ հինգ վինւոր։

ՄՕԴԴԵՐ-ՐԻՎԷՐ. «Рѣчь. գործ.»։ Գինեթալ Մէաուէն այսօր մի մեծ զօրաթժնով նորից սկսեց իր գործունէութիւնը եւ ամրակոծեց թչնամու ձախ թեւը. երեւաց, որ թչնամին ամուր գիրք է գրաւել այդտեղ։ Բօէրները չը պատասխանեցին կրակին։ Անգլիացիները վերջապէս յետ քաչվեցին առանց կորուստների։

ԼՕՆԴՕՆ։ «Рѣчь. գործ.»։ Դեկտեմբերի 22-ին։ Դեկտեմբերի 20-ին թչնամին վերսկսեց սաստիկ ամրակոծումն եւ դէպի այն բանակը, ուր գտնվում էին կանայք եւ երեխաներ, արձակեց վեց հատ ինն ֆունտանոց ռումբ, որոնցով սպանվեց մի փոքրիկ աղջիկ, իսկ ուրիշները վիրաւորվեցին։ Ռազմական գրութիւնն անփոփոխ է։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ «Рѣчь. գործ.»։ Սենատը ընտունեց Գելի առաջարկած որոչումն ամերիկական ապրանքների գրաւման մասին հետեւեալ ձեւով. «Որովհետեւ հաւատացնում են, թէ քիչ ժամանակ առաջ Մեծ-Բրիտանիայի վինւորական իշխանութիւնը Դելագօա ծովախորչում կամ նրա մօտ, առանց հատատուն պատճառների եւ հակառակ միջազգային իրաւունքի, գրաւել է ամերիկական քաղաքացիների գոյքը, որ չէ կարող վինւորական մաքսանենգ ապրանք համարվել եւ ապա՝ որովհետեւ հաւատացնում են, թէ յիշված գոյքը, հակառակ սեպհականութեան իրաւունքի, մնում է դեռ եւս անարգարացի կերպով գրաւված, ուստի այս պատճառներն ի նկատի առնելով՝ որոչվում է խնդրել նախագահին հաղորդել սենատին, եթէ այդ թոյլ են տալիս պետական չահերը, այն բոլոր փաստաթղթերը, որոնք գտնվում են արտաքին գործերի մինիստրութեան մէջ այս հարցի վերաբերմամբ եւ այն բոլոր չանքերը, որոնք գործ են դրված գրաւված գոյքը յետ ստանալու նպատակով։

ՏՈՒՐԻՆ։ «Սաեֆանիի գործ»։ Վիլլանէլի մօտ Բիչուի դինամիտային գործարանում տեղի ունեցաւ բռնկումն։ Սպանված են տասը մարդ. չատերը վիրաւորված են. մօտակայ գիւղերում վնասված են չատ տներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հրաման։ Յունվարի 4-ին Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնան ազատվեց ծննդաբերական երկունքից եւ բերեց արու զաւակ, որ կոչվեց Նիկիտա։ Հրամայում ենք, նորածնին, կայսերական արիւնից սերված Իշխանին, համաձայն նրան պատկանած իրաւունքի, որպէս Կայսեր ծոռի, ամէն տեղում, ուր վայել է՝ անուանել բարձրութիւն։

«Новое Время»-ն հաղորդում է, թէ Լիբաւայի մօտ զրահակիր «Պօլտաւա» նաւը վնաս կրեց։ Դժբաղդութիւնը պատահել յունվարի 4-ին։ Զրահակիրը հանդիպել ծանծաղուտի։

ՎԱՇԻՆԳՏՕՆ. «Рѣчь. գործ»։ Սենատը հաստատեց Սամօա կղզիների վերաբերեալ դաշնաթուղթը, բայց իրան իրաւունք վերապահեց վերջնական կարծիք յայտնել անհրաժեչտ որոչման առիթով միջնորդ դատաւորին դիմելու վերաբերմամբ։

ՎԱՐՇԱՎԱ։ Վախճանվեց Վարչավայի ուսումնական չրջանի հոգաբարձու Լիպին։

ԼՕՆԴՕՆ։ Անգլիական բանկը զեղչը իջեցրեց 5-ից 4½%-ի։

ԼԻԲԱՒԱ։ «Պօլտաւա» զրահակիրը երեքչաբթի ծանծաղուտից ելաւ եւ իարիսխ է ձգել։

ԼՕՆԴՕՆ։ «Times»-ին հաղորդում են Լօրէնսօ Մարկէզէից, թէ Յօհաննէսբուրգում յայտնի խռովութիւն է, թէ Դէլագօա ծոցով Տրանսվաալ են փոխադրված 20 թնդանօթ։

ԼՕՆԴՕՆ։ «Рѣчտերի գործակալութեան» յատուկ թղթակիցը հաղորդում է, թէ Տուգելա գետն անցնելու ժամանակ բօէրները կա փնած էին մեւս ափից մօտ մի մղոն հեռու։ Նրանք մի քանի անգամ հրաչտանագութիւն արին։ Անգլիացոց առաջապահ զօրքը պատասխանեց կրակին, իսկ մօտակայ բլուրից պատասխանեցին անգլիական թնդանօթները։ Այս ժամանակ մի քանի խմբեր պարօմով գետն անցան։ Թչնամին

մին, նկատելով որ իր դրութիւնը չատ անյարմար է՝ փախաւ բլուրները։ Ապա գետի վրա ժամանակաւոր կամուրջ ձգվեց, որի վրայով անցան Ուօրրէնի ոյժերը։

7 յունվարի

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովը 329 ձայնով 74-ի դէմ հաւանութիւն յայտնեց կառավարութեան ընթացքին՝ Բէլ'ֆօրում եւ Սէնտ-Իփիէնում եղած գործադուլի ժամանակ։

ԼՕՆԴՕՆ։ Զինուորական մինիստրութիւնը հեռագիր է ստացել Բուլլերից Սպիրմանսկամպից, յունվարի 6-ին, թէ դաշտային թընդանօթները եւ Լէյլոտօնի ջոկատը Տուգելա գետն անցաւ Պոտիփերգրիֆի մօտ։ Այն միջոցին, երբ մենք ռմբակոծում էինք թշնամու դիրքը՝ այս կէտից 5 մղոն վերը ժամանակաւոր 85 հարդ երկարութեան կամուրջով գետն անցաւ գեներալ Ուօրրէն։ Նրա աջ թեւի հանդէպ թշնամին չատպով ամրութիւններ է կառուցանում։ Մինիստրութիւնը հրատարակեց եւ հետեւեալ հեռագիրը, կապչատպից, գեներալ Բօքէրտսից. «Գաւէտր յայտնում է, թէ ամեն տեսակ զէնքի 300 զինուոր չարժվեցին դէպի Լօպէրբէրգ, իսկ 74-րդ բատարէան եւ մի գունդ ձիաւոր հետեւակների չարժվեց դէպի Բուշմինատգ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Տեղեակ աղբիւրից հաղորդում են, թէ Միացեալ-Նահանգների եւ Անգլիայի մէջ ոչ մի տարաձայնութիւն չը կայ ամերիկական ապրանքների գրաւման մասին իրաւաբանական կողմից։ Անգլիան անպայման համաձայնեց, թէ ապրանքները գրաւումի ենթակայ չեն, որով բոլորովին գոհ մնաց արտաքին գործերի մինիստրութիւնը։

ԲԵՐԼԻՆ։ Լօնդօնից պաշտօնապէս հաղորդվում է, թէ «Bundesrath» չորենաւը արձակված է։

Լօնդօնից հեռագրում են «Berliner Tageblatt»-ին, թէ երկկ 4 ժամին զինուորական մինիստրութիւնը ստացել է հեռագիր, թէ «Լէդսմիթ ազատված է»։

ՐԻՆՆՍԲՈՒՐԳ։ 16 հոգուց բաղկացած պահակներ երէկ թաղարդի մէջ ընկան։ Սաստիկ կռիւ տեղի ունեցաւ։ Մէկը սպանվեց, մէկը վիրաւորվեց, միւսները վերադարձան բանակը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Հիմք կայ կարծելու թէ կառավարութիւնը լուրջ կերպով զբաղված է Դանիայի Վէստինդեան կղզիները գնելու հարցով։

«Daily Telegraph» հաղորդում է, թէ Ուօրբէն բոլոր զօրքերով ամսի 5-ին անցաւ գետը, ուշադրութիւն չը դարձնելով բօէրների սաստիկ կրակի վրա, եւ դիրք բռնեց Սպիօնկոպի ուղղութեամբ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վէներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվաճի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. Բաբաճանեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ի. Ֆ. Պրօսանեվիչ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. Գուրկօ—1¼—2 ժ. ներքին հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ի. Ֆ. Պրօսանեվիչ—5—6 ժ.
Ա. Ն. Շապկօվսկի—6—7 ժ. նեարդային (էլեքտրաբուժութիւն), վէներական և մորթի հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7—7½ ժ.
Վ. Մ. Մախվիլաձէ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն մէզի, խեխ և արեան։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Աղվաճիեանի—ատամ. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
72—150 **Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ**

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՕՆ
Կիրակի, յունվարի 9-ին
Թիֆլիսի հայ դերասանական ընկերութիւնը
կը ներկայացնէ
ԶԱՒԱԿ
Դրամա 5 գործ., թարգ. ֆրանսերէնից
Մասնակցում են՝ տ.տ. Զաբէլ, Ազնիւ, օր.օր. Վարդիթեր, Մարի-Հրանոյշ, պ.պ. Միրազեան, Յարութիւնեան, Մամիկոնեան, Անդրանիկ, Աւետեան, Միրզոյեան եւ այլք։
Սկիզբն է երեկոյեան ժամի 8-ին։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺ. Մ. ԽԱՉԱՏՒՐ ԳԷՂԵՎԱՆՕՎԻ
Հիւանդներին ընդունում է ամեն օր, բացի կիրակի օրերից։
Ա ռ ա ւ օ տ ն ե ր ը՝
Վ. Ի. ՀԻՃԻՆԱԴՋ—ատամների հիւանդ. 8—10 ժ.
Գ. Գ. ՄԱՂԱԼՕՎ—ներքին հիւանդ. 9—10 ժ.
Դ. Կ. ԵՐԻՍԹՕՎ—վիրաբուժութեան. 10—12 ժ.
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—ականջի, կոկորդի և քթի հ. ամեն օր 10½—12 ժ.
Ա. Ն. ՇԱՏԻԼՕՎ—աչքի հ.—12—1 ժ.
Ն. Զ. ՈՒՄԻԿՕՎ—երեխաների հ. երկուշաբթի և ուրբաթ օր. 12—1 ժ.
Վ. Լ. ՄԱՐԿԵՎԻՉ—վիրաբուժական հ. 12—1 ժ. և երեքշաբթի օր 3—4 ժ.
Ի. Դ. ԲԷԳԹԱԲԷԳՕՎ—վէներական, մորթի և միզասեռ. հ. 1½—2 ժ.
Մ. Ա. ԳԷՐԻԼՈՎՆՕՎ—նեարդային և էլեկտրօէներապիա, 1—2 ժ.
Ե ր ե կ ո ն ե ր ը՝
Դ. Ա. ԳԷՂԵՎԱՆՕՎ—ներքին և երեխաների հ. (ծաղկահատութիւն) 5—6 ժ.
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ—կանանց և մանկաբարձական, 5—6 ժ.
Հիւանդանոցում գտնվում են մշտական մահճակալներ և բժշկական անհրաժեշտ խոշորացուցական և քիմիական հետազօտութիւնների համար։
Վճարը խորհրդի համար—50 կ. մնացածը պայմանով։
Նիկօլաեվսկայա փողոց, Վօրօնցօվի արձանի հանդէպ, տ. Սադինօվի, № 11
Հիւանդանոցի վերատեսուչ՝
0—3 **Միխայիլ ԳԷՂԵՎԱՆՕՎ**

ԲԱՆԿԱՅԻՆ ԹԱՏՐՕՆ
Շաբաթ, յունվարի 8-ին, 1900 թ.
ՀԱՄԵՐԳ
Խ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
Մասնակցում են՝ օր. օր. Դ. Ալիխանեան, Մ. Սոնայանց. պ.պ. Մ. Վարդիկեան, Մ. Ռոստոմեան, Ա. Մանուկեան, Ա. Յակոբջանեան, Մ. Մազմանեան եւ խումբը.
I ԿՕՆՑԵՐՏԱԿԱՆ
II «ԶՐՕՐՀՆԵՆՔԻ ԳԻՇԵՐ»
III «ՀԱՐՍԱՆԵԱՑ ԳՆԱՑՔ»
Տօմսակները ծախվում են՝ թատրօնի կասսայում։
2—2

ԴԵՊՕ ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄԻ
Դեղին եւ սպիտակ կօկօններից, հետեւեալ ֆիրմաների՝
Ա.Լ.Օ.Ի.Զ.Ի եւ ԸՆԿ., Ա.Լ.Օ.Ի.Զ.Ի, ԲԵՐՏԷ եւ ԸՆԿ., ՖԷՐՐԱՆ։
Բոլոր տուփերը հինգ-հինգ մսխալանոց են, բանդերօլով եւ կնքված Թիֆլիսի չերամապահական կայարանի զմուռի կնիքով։
Ցանկացողները կարող են դիմել Օ. Գ. Բաբեկենդանեանցին, «Պակէ» ընկերութեան գործակալին, Սիօնի փողոցի վրա, Մայսուրաձէի եւ Խօջաբարուխովի քարավանսարայում։ 1—5

Ձգուշացէք կեղծուածներից
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ
Գ։ Ֆ. ԻՒՐԳԷՆՍ
Ոչնչացնում է պեպէնները, սեւուքիւնը, դէղին բծերը, պուպրիկները եւ պտուկները եւ ներգործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան։
ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թ-ի համար։
կտորի գինը 50 կ., ½ կտորի 30 կ.։
Ծախվում է բոլոր ամենալաւ գեղագործական մագազիններում եւ դեղատներում։
Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մօսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում, Ադմուրովի մօտ, գեղագործական ապրանքների առեւտրի կովկասեան ընկերութեան մէջ, Ծուբինօվի եւ Գրիվէնակի, պ.պ. Պօպօվների եւ Արիստակովի մօտ։ M. 192812 1—24

Շաբաթ, յունվարի 8-ին,
ԹԻՖԼԻՍԻ ՀՕՂՈՎԱՐԱՆԻ ԴԱԼԻՃՈՒՄ
Պ.պ. անդամների, կանդիդատների եւ նրանց ընտանիքների համար կը կայանայ
I
ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ
II
հայ դրամատիքական ընկերութիւնը կը ներկայացնէ
ա. «**Մ կ Ն Ի կ**»
վօդ. 1 գործ., հեղ. Սրմօն Բօզօի, թարգմ. Ա. Թարխանեանի եւ
բ. ՀԱՐԱՀԱՏԵԱԼ ԴԵՐԱՍԱՆ
վօդ. 1 գործ., թարգ. Դ. Տէր-Դաւթեանի։
Մասնակցում են՝ տիկ Մարի, տ. Ազնիւ եւ պ.պ. Միրազեան, Յարութիւնեան, Միրզայեան։ Անդրանիկ, Եազօն եւ ուրիշները։
Սկիզբն է երեկոյեան 7 ժամին։ Տոմսակները արժեն՝ 20, 30, 50, 75 կ. եւ 1 րուբլի. Կարելի է ստանալ ժողովարանի ծառայի մօտ։ 2—3

ԲՐՈՒՍԱՑԻ ՅԵԼԻԻԼԱՐ
ԹԵՐԱՄԻ ՍԵՐՄ
զանազան ֆիրմաներից, ծախվում է Ս. Կիւլպէնգեանի մօտ, նոր Շադինօվի քարվանսարում № 19։ 2—3

ԼԷՕ
ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ
պատմական վէպ, 753 երես.
(Մնացել են սակաւաթիւ օրինակներ)
ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 30 ԿՕՊԵԿ
Դիմել Թիֆլիս, «Մշակի» խմբագրութեան։
2—10

ՄԱՆԿԱԲԱՐԶՈՒՀԻ-ՄԱՍՍԱԺԻՍԿԱ
ՕՐԻՈՐԴ ՆՈՒՆԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՕԼՕՇՆԱՆ։
Հասցէն՝ Красногорская ул. № 14. 8 20

49—52 М. 36,019



Առևտրական մարկան հաստատված կառավարութիւնից։

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ
պալատի հայթայթողներ
ԹԷՅԻ ԱՌԵՒՏՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Վ. ՎԻՍՕՑԿԻ եւ ԸՆԿ.
Մօսկվայում.
ԲԱՑՎԱԾ Է Ն. Տ. ՅՈՒՆՎԱՐԻ 1-ից ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Թիֆլիսում
Մայդան, տ. **Գ. Ե. ԲԱՅԱՆԴՈՒՐՕՎԻ**
Ընկերութեան թէյը ծախու է գտնվում բոլոր լաւ մագազիններում։ 1—20

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ եւ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ։
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզօն, Սամսօն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 5/17 յունվարի ՍԻՐԿԱՍԻ չոգենաւը, նաւապետ ԳԱՐՐԻԳ։ Եւ այսպէս չարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը. ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօլին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջաբարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարաւ։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն կրասիլնիկովի, № 27։ ՆՕՎՕՐՕՍՍԻՑՍԿ—պ. Մելխիօր Հերշենզօնին։ (Ե. Հ. Չ.) 9—20

Գատրաստում ենք և ցանկացողներին ուղարկում ամբողջ Կովկասում ամենայայտնի Գանձասարի վանքի քարահանքից ամենաընտիր տեսակի «ՂԱՐԱԲԱՂԻ»



ՋՐԱՂԱՑԱԿԱՐԵՐ
մատչելի գներով և գանազան մեծութեան։
Մեր հասցէն. Евлахъ, контора Меликъ-Пашаянъ.
Որովհետեւ վերջերս երեացել են նաեւ ուրիշ հանքերի քարեր, որոնք յատկութեամբ չատ յետ են կանգնած, ուստի խնդրում ենք ցանկացողներին դիմել միմիայն մեզ։
23—40 Գարահանքի կապալառու՝ Աբրահամ Հասան-Զալալեանց

„ՎԻԷՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“
ԱՂԷՔ. ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆԻ
Գօլովինսկի Պրօսպէկտի վրա, առաջին գիմնազիայի հանդէպ, տան Քաչուբէի սուրբ Գէորգ եկեղեցու։
Սատացել հինը մեծ քանակութեամբ աշնանային եւ ձմերային սեզօնի համար՝
Տղամարդկանց եւ Երեխաների պատրաստի հագուստներ։
Ստացված է նորագոյն **ՖՕՐՄԷՆՆԻՑ ԶԳԵՍՏՆԵՐ**.— դատաստանական, ուսուցչական և աշակերտական—կլասիկական և իրական ուսումնարաններից։
Ունենալով մեծ քանակութեամբ ժատէրիաներ, ընդունում ենք նաեւ ամեն տեսակ պատուէրներ։ Գները ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵՆ և անհամեմատ էժան։
Վերադիր վճարով պատուէրները պէտք է ուղարկեն պատուէրի ½ ժամը։
35—40

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.
И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ
преподаетъ
Полный курсъ БУХГАЛТЕРІИ
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:
1) Бухгалтерія (двойная италіянская), 2) Коммерческая ариѳметика, 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.
Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.
Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.
Занятія съ января мѣсяца. 11—100
За успѣшныя занятія благодарности.
Преподов. ведется по собств. сочиненіямъ.
Годъ занятій десятый.

Дозволено цензурою, Тифлисъ, 7 Января 1900 г.
Типографія Грузинск. Т.—ва, Большая-Ванкская ул., № 27.